

Ֆինանսական հաշվետվություններ և Անկախ աուդիտորի եզրակացություն

ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

31 դեկտեմբերի 2023թ.



Բովանդակություն

Անկախ աուդիտորի եզրակացություն	3
Հոգաբարձուների խորհրդի կազմը	6
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն	7
Եկամտի և ծախսերի մասին հաշվետվություն	8
Զուտ ակտիվներում փոփոխությունների մասին հաշվետվություն	9
Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն	10
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ	11

Անկախ աուդիտորի եզրակացություն

Կայուն զարգացման ներդրումային հիմնադրամի հոգաբարձուների խորհրդին,

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել Կայուն զարգացման ներդրումային հիմնադրամի (այսուհետ Հիմնադրամ) ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ֆինանսական վիճակի մասին, եկամտի և ծախսերի մասին, զուտ ակտիվներում փոփոխությունների մասին և Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները և հաշվետվություններին կից ծանոթագրությունները 2023 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ ավարտվող տարիների համար:

Մեր կարծիքով՝ կից ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով տալիս են Հիմնադրամի՝ 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ֆինանսական վիճակի և նույն ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքների ու դրամական հոսքերի ճշմարիտ և իրական պատկերը՝ համաձայն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ-ներ):

Կարծիքի հիմք

Մենք աուդիտն անցկացրել ենք աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է մեր եզրակացության՝ «Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» բաժնում: Մենք անկախ ենք Հիմնադրամից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակված «Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի կանոնագրքի» (ՀԷՄՄԿ կանոնագիրք) և էթիկայի համապատասխան պահանջների, որոնք կիրառելի են ֆինանսական հաշվետվությունների մեր աուդիտի նկատմամբ Հայաստանի Հանրապետությունում, և կատարել ենք էթիկայի գծով մեր այլ պարտականությունները՝ էթիկայի նշված պահանջների համաձայն: Մենք համոզված ենք, որ մեր կողմից ձեռք բերված աուդիտորական ապացույցները բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքն արտահայտելու համար:

Ղեկավարության և կառավարման օղակներում գտնվող անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ-ների համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման և այնպիսի ներքին հսկողության համար, որն ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս ղեկավարությունը պատասխանատու է Հիմնադրամի՝ անընդհատ գործելու կարողությունը գնահատելու համար, համապատասխան դեպքերում անընդհատության հետ կապված հարցերը բացահայտելու և Հիմնադրամի գործունեության անընդհատության ենթադրության հիման վրա հաշվետվությունները պատրաստելու համար, բացառությամբ այն դեպքերի, երբ ղեկավարությունը մտադիր է լուծարել Հիմնադրամը, ընդհատել դրա գործունեությունը կամ, երբ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:



MELIKYANS & CO

Կառավարման օղակներում գտնվող անձիք պատասխանատու են Հիմնադրամի ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով գերծ են էական խեղաթյուրումներից՝ անկախ դրանց՝ խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորական եզրակացություն: Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՄ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի արդյունքում և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք առանձին կամ միասին վերցրած կազդեն օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

Որպես ԱՄՄ-ներին համապատասխան աուդիտի մաս, աուդիտի ողջ ընթացքում մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում ենք մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն՝

- Որոշակիացնում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար ու համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության պատճառով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության չարաշահում:
- Ձեռք ենք բերում պատկերացում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, այլ ոչ թե Հիմնադրամի ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:
- Գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և համապատասխան բացահայտումների ողջամտությունը:
- Եզրահանգումներ ենք կատարում ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ և, հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա, գնահատում ենք՝ արդյոք առկա է դեպքերի կամ հանգամանքների հետ կապված էական անորոշություն, որը կարող է նշանակալի կասկած հարուցել Հիմնադրամի անընդհատ գործելու կարողության վերաբերյալ: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորի եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Այնուամենայնիվ, ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Հիմնադրամին դադարեցնել անընդհատության հիմունքի կիրառումը:
- Գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ բացահայտումները, ինչպես նաև



MELIKYANS & CO

Ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը:

Կառավարման օղակներում գտնվող անձանց, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտորական առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

Ռոբերտ Մելիքյան

Տնօրեն-բաժնետեր

Առաջադրանքի պատասխանատու



26 հունիսի 2024թ.

Հոգաբարձուների խորհրդի կազմը

Լևոն Շահվերդյան

Խորհրդի նախագահ

Տիգրան Հարությունյան

Խորհրդի անդամ

Հովհաննես Բուրմանյան

Խորհրդի անդամ

Խորհրդի քարտուղար

Արթուր Ղարախանյան

Խորհրդի անդամ

Հարություն Մելիքյան

Խորհրդի անդամ

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

Հասար դրա	Ծանոթ.	31 դեկտեմբերի 2023թ.	31 դեկտեմբերի 2022թ.
Ակտիվներ			
<i>Ոչ ընթացիկ ակտիվներ</i>			
Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ	4	159	213
Տրված վոխատություններ		115	-
		<u>274</u>	<u>213</u>
<i>Ընթացիկ ակտիվներ</i>			
Հետաձգված հարկային ակտիվներ	13	1,637	1,110
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	5	10,151	7,232
Մնացորդներ դրամարկղում և քանկերում	6	5,025	766
		<u>16,813</u>	<u>9,108</u>
Ընդամենը ակտիվներ		<u>17,087</u>	<u>9,321</u>
Ջուր ակտիվներ			
Կանոնադրական կապիտալ	7	500	500
Կուտակված արդյունք		(17,229)	(1,952)
		<u>(16,729)</u>	<u>(1,452)</u>
Պարտավորություններ			
<i>Ընթացիկ պարտավորություններ</i>			
Փոխառություններ	8	14,453	3,710
Կրեդիտորական պարտքեր շահութահարկի գծով	13	90	57
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	9	19,273	7,006
		<u>33,816</u>	<u>10,773</u>
Ընդամենը զուտ ակտիվներ և պարտավորություններ		<u>17,087</u>	<u>9,321</u>

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են 26 հունիսի 2024թ. -ին

Գլխավոր տնօրեն՝

Հայկ Բադալյան

Ֆինանսական տնօրեն՝

Արա Հովհաննիսյան

Գլխավոր հաշվապահ՝

Սիրանուշ Գրիգորյան

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի սույն ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը կազմող 11-ից 29-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ միասին:

Եկամտի և ծախսերի մասին հաշվետվություն

Հազար դրամ	Ծանոթ.	2023թ.	2022թ.
<i>Եկամուտ</i>			
Հասույթ	10	58,784	83,887
Ինքնարժեք	11	(41,024)	(64,480)
		<u>17,760</u>	<u>19,407</u>
Այլ եկամուտ		<u>828</u>	<u>-</u>
<i>Ծախսեր</i>			
Վարչական ծախսեր	12	(34,261)	(40,000)
Փոխարժեքային տարբերությունից զուտ վնաս		(41)	(380)
		<u>(34,302)</u>	<u>(40,380)</u>
Արդյունք մինչև հարկերը		<u>(15,714)</u>	<u>(20,973)</u>
Շահութահարկի գծով հակադարձում	13	437	945
Տարվա արդյունք		<u>(15,277)</u>	<u>(20,028)</u>

Եկամտի և ծախսերի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի սույն ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը կազմող 11-ից 29-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ միասին:

Զուտ ակտիվներում փոփոխությունների մասին հաշվետվություն

Հազար դրամ	Կանոնադրական կապիտալ	Կուտակված արդյունք	Ընդամենը
2022թ. հունվարի 1-ի դրությամբ	500	18,076	18,576
Տարվա արդյունք	-	(20,028)	(20,028)
2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	500	(1,952)	(1,452)
Տարվա արդյունք	-	(15,277)	(15,277)
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	500	(17,229)	(16,729)

Զուտ ակտիվներում փոփոխությունների մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի սույն ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը կազմող 11-ից մինչև 29-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ միասին:

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն

Հազար դրամ	Ծանոթ.	2023թ.	2022թ.
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր			
Տարվա արդյունք		(15,277)	(20,028)
<i>Ճշգրտումներ¹</i>			
Մաշվածություն և ամրոտիզացիա		249	398
Շահութահարկի գծով ծախս		(437)	(945)
Փոխարժեքային տարբերությունից վնաս		41	380
<i>Գործառնական արդյունք նախքան շրջանառու կապիտալի փոփոխությունները</i>		(15,424)	(20,195)
Առևտրային և այլ դեբիտորական պարտքերի փոփոխություն		(2,919)	32,351
Պաշարների փոփոխություն		-	133
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքերի փոփոխություն		12,267	(18,463)
<i>Գործառնական գործունեության համար օգտագործված դրամական միջոցներ</i>		(6,076)	(6,174)
Վճարված շահութահարկ		(57)	(4,124)
<i>Գործառնական գործունեության համար օգտագործված զույր դրամական միջոցներ</i>		(6,133)	(10,298)
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսքեր			
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ձեռքբերում		(195)	(229)
Ոչ նյութական ակտիվների վերագնահատումից կորուստներ		-	120
Տրված փոխառություններ		(4,989)	-
Տրված փոխառությունների մարում		4,874	-
<i>Ներդրումային գործունեության համար օգտագործված զույր դրամական միջոցներ</i>		(310)	(109)
Ֆինանսավորման գործունեությունից դրամական միջոցների հոսքեր			
Ստացված փոխառությունների գծով մուտքեր		37,813	3,360
Ստացված փոխառությունների մարում		(27,070)	(2,750)
<i>Ֆինանսավորման գործունեությունից ստացված զույր դրամական միջոցներ</i>		10,743	610
Դրամարկղում և բանկերում մնացորդների զուտ աճ/(նվազում)		4,300	(9,797)
Արտարժույթի փոխարժեքի ազդեցությունը դրամական միջոցների վրա		(41)	(380)
Դրամարկղում և բանկերում մնացորդներ տարվա սկզբում		766	10,943
Դրամարկղում և բանկերում մնացորդներ տարվա վերջում	6,20	5,025	766

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի սույն ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը կազմող 11-ից 29-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ միասին:

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

1 Հիմնադրամի գործունեության բնույթը և ընդհանուր տեղեկատվություն

Կայուն Ջարգացման Ներդրումային Հիմնադրամը ինքնուրույն իրավաբանական անձ է, հիմնադրի կամավոր գույքային վճարների հիման վրա ստեղծված և անդամություն չունեցող, ոչ առևտրային, շահույթ ստանալու նպատակ չհետապնդող կազմակերպություն է և գործում է անժամկետ:

ԿԶՆ հիմնադրամը վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության ոլորտների զարգացման միջավայր ձևավորող պետական կառույց է, որը կայուն էներգետիկայի լավագույն փորձառությունն է ներդնում Հայաստանի էներգետիկ անվտանգության և անկախության ապահովման ու տնտեսական աճին նպաստելու համար:

Հիմնադրամը հիմնադրվել է 11 նոյեմբերի 2019թ., գրանցման համարն է՝ 222.160.1101453:

ԿԶՆ հիմնադրամի գլխավոր նպատակներն են.

- Նպաստել վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության ոլորտի զարգացմանը,
- Խթանել շուկայի զարգացմանը և ոլորտում ներդրումների ներգրավմանը,
- Մշակել էներգետիկ անվտանգության, էներգետիկ համակարգի հուսալիության աստիճանի բարձրացմանն ուղղված մեխանիզմներ,
- Կազմակերպել և իրականացնել ոլորտի զարգացմանը խթանող վարկային, դրամաշնորհային և այլ ծրագրեր,
- Նպաստել շրջակա միջավայրի, մարդու առողջության վրա տեխնաձին ազդեցության նվազեցմանը:

ԿԶՆ հիմնադրամի գործունեության ռազմավարական ուղղությունները

• Վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության ծրագրերի իրականացում: Նախապատրաստելով և իրականացնելով վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության բազմաբնույթ ծրագրեր ԿԶՆ հիմնադրամը նպատակ ունի խթանիչ միջավայր ստեղծել և ճանապարհ հարթել ոլորտում մասնավոր ներդրումների համար, ապահովել ոլորտի ընդհանուր զարգացումը: Ներկայումս իրականացվող ծրագրերի թվում են արդյունաբերական մասշտաբի արևային ֆոտովոլտային, երկրաջերմային էներգետիկայի զարգացման, հանրային նշանակության օբյեկտներում էներգախնայողության, Հայաստանում համայնքների էներգաարդյունավետության բարձրացման և մի շարք այլ ծրագրերը:

• Վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության ոլորտում ֆինանսական գործիքների մշակում և ներդնում: Այն նպատակաուղղված է լայնացնել Հայաստանի ֆինանսական շուկայի համապատասխան առաջարկների գործիքակազմը, ավելի մատչելի և հուսալի դարձնել դրանց կիրառումը: Ֆինանսական աջակցությունը ԿԶՆ հիմնադրամը իրականացնում է և ուղղակի ֆինանսավորմամբ և ֆինանսական հաստատությունների հետ համագործակցությամբ:

• Մասնակցություն ոլորտի քաղաքականության մշակմանը և օրենսդրական բարեփոխումներին: ՀՀ կառավարությունը որդեգրել է երկրի էներգետիկ բալանսում վերականգնվող էներգետիկայի մասնաբաժնի ավելացման և էներգաարդյունավետության մակարդակի բարձրացմանն ուղղված պետական քաղաքականություն, որի իրականացմանը նպաստելն էլ

հանդիսանում է ԿԶՆ հիմնադրամի առաքելության կարևորագույն բաղկացուցիչներից մեկը: ԿԶՆ հիմնադրամը մշտապես ներգրավված է ոլորտին վերաբերող նորմատիվ ակտերի փորձագիտական մեկնաբանությունների և կարծիքների տրամադրմանը, ակտիվ մասնակցում ոլորտի օրենսդրության և կանոնակարգերի մշակման աշխատանքներում, տեխնիկական և խորհրդատվական ծառայություններ մատուցում ՀՀ կառավարությանը:

- Համապատասխան կարողությունների զարգացմանը և ոլորտի նորարարությունների խթանում: ԿԶՆ հիմնադրամը հետևողական քայլեր է ձեռնարկում վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության ոլորտում մասնագիտական կարողությունների զարգացմանը: Վերապատրաստման դասընթացների, սեմինարների, կոնֆերանսների, ցուցահանդեսների կազմակերպումն ու անցկացումը, երկրում ոլորտի հետազոտական կարողությունների զարգացումը, վերլուծական և տեղեկատվական նյութերով տեղեկատվության տրամադրումը, հրապարակումն ու ձեռնարկների տպագրությունը, հանրային իրազեկման այլ գործիքների կիրառումը ԿԶՆ հիմնադրամի ամենօրյա գործառնությունների թվում են և միտված են բարձրացնելու ոլորտի մասնագիտական ներուժն ու համապատասխան գաղափարախոսության սերմանումը հանրության լայն շրջանում:

- Խորհրդատվական, փորձագիտական ծառայությունների մատուցում: Ոլորտում մասնագիտական բարձրակարգ ծառայությունների մատուցմամբ ԿԶՆ հիմնադրամը նպաստակ է հետապնդում նպաստել հանրային և մասնավոր հատվածի համար ներդրումային միջավայրի բարելավմանը և շուկայի ընդհանուր զարգացմանը: Հանրապետության էներգետիկ բալանսի կազմումը, ներդրումային նախագծերի գնահատումը մասնավոր ներդրողների համար, էներգետիկ աուդիտների անցկացումը, էներգախնայողության տեսանկյունից սարքավորումների փորձաքննության անցկացումն ու պիտակավորումը մի քանիսն են այն ծառայություններից, որոնք խթանում են համապատասխան միջավայրի, ինստիտուտների և մեխանիզմների առաջանալուն ու զարգանալուն:

- Միջազգային համագործակցություն կայուն էներգետիկայի բնագավառում: ԿԶՆ հիմնադրամը համագործակցում է իր միջազգային գործընկերների հետ ի նպաստ էներգախնայողության, վերականգնվող և կայուն էներգետիկայի ոլորտում նոր տեխնոլոգիական լուծումների ստեղծման, տարածման և մասսայականացման գործում, մաքուր էներգետիկայի և շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության նվազեցմանը միտված մոտեցումների կիրառման տարածմանը:

Հիմնադրամը գործում է Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում և չունի մասնաճյուղեր: Հիմնադրամի գտնվելու վայրն է ՀՀ, ք. Երևան, 0038, Աբեյյան 3/22,:

2023 թվականի ընթացքում Հիմնադրամի աշխատակիցների միջին թվաքանակը կազմել է 14 աշխատակից (2022 թվականի ընթացքում՝ 14 աշխատակից)::

Հիմնադրամի բարձրագույն կառավարման մարմինը հիմնադիրների խորհուրդն է, որն ընտրում է հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի անդամներին: Հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդը կազմված է հինգ անդամից: Խորհրդի նախագահին իրենց կազմից ընտրում են Խորհրդի անդամները՝ երեք տարի ժամկետով:

Գործարար միջավայր

Հիմնադրամն իր գործունեությունն իրականացնում է Հայաստանում: Հետևաբար, Հիմնադրամի գործունեության վրա ազդեցություն են ունենում Հայաստանի տնտեսությունը և ֆինանսական շուկան, որոնց բնորոշ են զարգացող շուկայի հատկանիշներ: Իրավական, հարկային և օրենսդրական համակարգերը շարունակում են զարգանալ, սակայն կարող են ունենալ տարբեր մեկնաբանություններ և ենթակա են հաճախակի փոփոխությունների, ինչը, այլ իրավական և ֆինանսական խոչընդոտների հետ մեկտեղ, բարդություններ է ստեղծում Հայաստանում գործող կազմակերպությունների համար:

2022թ. փետրվարից շարունակվող ռուս-ուկրաինական պատերազմը էական ազդեցություն է ունեցել ինչպես հակամարտող երկրների, այնպես էլ համաշխարհային տնտեսության վրա՝ հանգեցնելով հումանիտար ճգնաժամի և հսկայական տնտեսական կորուստների Ուկրաինայում, Ռուսաստանում և այլ երկրներում:

Չնայած դժվարին մարտահրավերներին՝ Հայաստանի տնտեսությունը շարունակում է դրսևորել բավականին բարձր դիմադրողականություն շնորհիվ ՀՀ կառավարության և ՀՀ կենտրոնական բանկի կողմից շարունակաբար իրականացվող արդյունավետ մակրոտնտեսական քաղաքականությունների և համարժեք գործողությունների: Տնտեսական աճի և ակտիվության տեմպերը շարունակում են բարձր մնալ՝ պայմանավորված նաև օտարերկրյա քաղաքացիների մեծ ներհոսքով: Օտարերկրյա քաղաքացիների՝ Հայաստանում բիզնես շահեր ունենալու, հիմնելու կամ տնօրինելու իրավունքի սահմանափակումներ չկան: Բիզնեսի գրանցման ընթացակարգերը հիմնականում պարզ են:

Ֆինանսական հաշվետվություններն արտացոլում են Հիմնադրամի գործունեության և ֆինանսական վիճակի վրա Հայաստանի գործարար միջավայրի ազդեցության ղեկավարության գնահատականը: Հիմնադրամի ղեկավարությունը, շարունակաբար վերլուծում է տնտեսական իրավիճակը ներկա միջավայրում: Ապագա տնտեսական և քաղաքական իրավիճակը և վերջիններիս ազդեցությունը Հիմնադրամի գործունեության վրա կարող են տարբերվել Հիմնադրամի ղեկավարության ներկա սպասումներից:

2 Պատրաստման հիմքերը

2.1 Համապատասխանություն

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ) համաձայն, ինչպես հրապարակվել է Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՍԽ) կողմից: Հաշվետվությունները պատրաստվել են՝ հիմնվելով այն գնահատման վրա, որ Հիմնադրամն իր գործունեությունն իրականացնում է անընդհատության սկզբունքից ելնելով:

Ներկայումս ՖՀՄՍ-ները չեն պարունակում հաշվապահական հաշվառման վարման և ֆինանսական հաշվետվությունների ներկայացման վերաբերյալ հատուկ ուղեցույցներ շահույթ չհետապնդող և ոչ կառավարական կազմակերպությունների համար: Եթե ՖՀՄՍ-ները չեն տալիս ուղղություն շահույթ չհետապնդող ոլորտի կազմակերպություններին հատուկ գործարքների հաշվառման վերաբերյալ, ապա հաշվապահական հաշվառման քաղաքականությունը պետք է հիմնվի ՖՀՄՍ-ների ընդհանուր սկզբունքների վրա՝ համաձայն Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՍԽ):

2.2 Չափման հիմքեր

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են սկզբնական արժեքի սկզբունքով:

2.3 Գործառնական և ներկայացման արժույթ

Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը հայկական դրամն է (դրամ), որն էլ հանդիսանում է Հիմնադրամի գործառնական արժույթը, քանի որ այն լավագույնս արտացոլում է ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած իրադարձությունների և Հիմնադրամի գործարքների տնտեսական բովանդակությունը:

Սույն ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են հայկական դրամով, քանի որ, ղեկավարության համոզմամբ, այս արժույթն առավել օգտակար է Հիմնադրամի ֆինանսական

հաշվետվություններն օգտագործողների համար: Դրամով ներկայացված ամբողջ ֆինանսական տեղեկատվությունը կլորացված է հազար միավոր:

2.4 Գնահատումների և դատողությունների կիրառում

ՖՀՄՍ-ներին համապատասխան ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը պահանջում է, որպեսզի Հիմնադրամի ղեկավարությունը կարևոր գնահատումներ և ենթադրություններ կատարի, որոնք ազդեցություն են գործում ֆինանսական հաշվետվությունների ամսաթվի դրությամբ ակտիվների և պարտավորությունների գումարների, ինչպես նաև հաշվետու տարվա եկամուտների և ծախսերի գումարների վրա:

2.5 Նոր և վերանայված ստանդարտների ընդունում

Սույն ֆինանսական հաշվետվությունների հաստատման օրվա դրությամբ լույս են տեսել մի շարք նոր ստանդարտներ, գործող ստանդարտների վերաբերյալ փոփոխություններ և մեկնաբանություններ, որոնք դեռևս ուժի մեջ չեն մտել: Հիմնադրամը վաղաժամկետ չի ընդունել այդ ստանդարտներից և մեկնաբանություններից որևէ մեկը:

Ղեկավարությունը կանխատեսում է, որ կիրառելի նոր ստանդարտներն ու մեկնաբանությունները կընդունվեն Հիմնադրամի կողմից՝ դրանց ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող առաջիկա ժամանակաշրջանում:

Ղեկավարության կանխատեսմամբ այս փոփոխությունները էական ազդեցություն չեն ունենա Հիմնադրամի ֆինանսական հաշվետվությունների վրա և ներկայացված են ստորև:

- ՖՀՄՍ 16 «Վարձակալություններ»

Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդը՝ (ՀՀՄՍԽ) թողարկեց «Վարձակալության պարտավորությունը վաճառքի և հետադարձ վարձակալության դեպքում (փոփոխություններ ՖՀՄՍ 16)» որը հստակեցնում է թե ինչպես վաճառող-վարձակալը հետագայում պետք է չափի վաճառքի և հետադարձ վարձակալության գործարքները, որոնք բավարարում են ՖՀՄՍ 15 պահանջները՝ հաշվառելով որպես ակտիվի վաճառք:

«Վարձակալության պարտավորությունը վաճառքի և հետադարձ վարձակալության դեպքում (փոփոխություններ ՖՀՄՍ 16)» պահանջում է վաճառող-վարձակալին վարձակալության պարտավորությունը, որը առաջանում է հետադարձ վարձակալության դեպքում, հետագայում այնպես չափել, որ այն չճանաչի օգտագործման իրավունքով պահվող ակտիվների վարձակալության վերաբերվող օգուտ կամ կորուստը: Նոր պահանջները ետ չեն պահում վաճառող-վարձակալին շահույթ վնասում ճանաչել վարձակալության մասնակի կամ ամբողջական կասեցումից առաջացող օգուտ կամ կորուստը:

Փոփոխությունները ուժի մեջ են մտնում 01 հունվար 2024 թվականից: Վաղաժամ կիրառումը թույլատրվում է:

- ՀՀՄՍ 1 Փոփոխություններ «Ոչ ընթացիկ պարտավորություններ կովենանտներով»

2022թ. հոկտեմբերին Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդը՝ (ՀՀՄՍԽ) թողարկեց ոչ ընթացիկ պարտավորություններ կովենանտներով, ՀՀՄՍ 1 (Փոփոխություններ), որպեսզի հստակեցնի պայմանները, որը Ընկերությունը պետք է ապահովի տասներկու ամսվա ընթացքում հաշվետու ժամանակաշրջանից հետո, որը ազդում է

պարտավորության դասակարգման վրա: Փոփոխությունները ուժի մեջ են մտնում սկսած 01 հունվար 2024թ.-ից:

3 Հաշվապահական հաշվառման քաղաքականություն

3.1 Արտարժույթ

Արտարժույթով գործարքներ

Ֆինանսական հաշվետվություններ պատրաստելիս Հիմնադրամի համար գործառնական արժույթից տարբեր այլ արժույթով իրականացված գործարքները գրանցվում են գործարքի օրվա դրությամբ Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի (<< ԿԲ) կողմից հրապարակված փոխարժեքով: Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ արտարժույթով դրամային հոդվածները վերահաշվարկվում են՝ կիրառելով հաշվետու ամսաթվի դրությամբ << ԿԲ-ի կողմից հրապարակված փոխարժեքը:

	2023թ.	2022թ.
ԱՄՆ դոլար	404.79	393.57
Եվրո	447.90	420.06
Ռուբլի	4.50	5.59

Ոչ դրամային հոդվածները չեն վերահաշվարկվում հաշվարկվում են՝ օգտագործելով գործարքի օրվա դրությամբ գործող փոխարժեքը, բացառությամբ իրական արժեքով հաշվառվող և արտարժույթով արտահայտված ոչ դրամային հոդվածների, որոնք վերահաշվարկվում են իրական արժեքի չափման օրվա դրությամբ գործող փոխարժեքով:

Արտարժույթով գործարքներից, ինչպես նաև արտարժույթով արտահայտված դրամային հոդվածների վերահաշվարկումից առաջացած փոխարժեքային տարբերությունները ճանաչվում են ժամանակաշրջանի արդյունքում: Իրական արժեքով արտահայտված ոչ դրամային հոդվածների վերահաշվարկումից առաջացած փոխարժեքային տարբերությունները ներառվում են ժամանակաշրջանի արդյունքում, բացառությամբ այն ոչ դրամային հոդվածների վերահաշվարկումից առաջացած տարբերությունների, որոնց վերաբերող օգուտը կամ վնասը ճանաչվում է ուղղակիորեն գուտ ակտիվներում:

Հիմնադրամի ակտիվներն ու պարտավորությունները վերահաշվարկվում են դրամից հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրվա դրությամբ գործող փոխարժեքով: Եկամտային և ծախսային հոդվածները վերահաշվարկվում են՝ օգտագործելով ժամանակաշրջանի միջին փոխարժեքը:

3.2 Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ

Հիմնական միջոցները հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստները: Սկզբնական արժեքը ներառում է ձեռքբերման գինը, ներկրման տուրքերը, հարկերը, որոնք ենթակա չեն վերադարձման, և ուղղակիորեն վերագրվող ծախսումներ: Երբ հիմնական միջոցների միավորը բաղկացած է տարբեր օգտակար ծառայության ժամկետ ունեցող խոշոր բաղկացուցիչներից, դրանք հաշվառվում են որպես հիմնական միջոցի առանձին միավորներ:

Մաշվածությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում կամ ավելացվում է այլ ակտիվի սկզբնական արժեքին՝ կիրառելով գծային մեթոդը հիմնական միջոցի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում: Մաշվածության հաշվարկը սկսվում է այն պահից, երբ ակտիվը դառնում է մատչելի՝ իր նպատակային նշանակությամբ օգտագործելու համար: Հիմնական միջոցների գնահատված օգտակար ծառայության ժամկետները ներկայացված են ստորև.

- Տնտեսական գույք - 8 տարի
- Այլ - 8 տարի

Քանի որ հողի համար հնարավոր չէ որոշել վերջավոր օգտակար ծառայության ժամկետ, համապատասխան հաշվեկշռային արժեքը չի ամորտիզացվում: Ոչ նյութական ակտիվները, որոնք ձեռք են բերվել Հիմնադրամի կողմից և ունեն օգտակար ծառայության որոշակի ժամկետ, ներկայացված են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված ամորտիզացիան և արժեզրկումից կորուստները: Ամորտիզացիան ճանաչվում է շահույթում կամ վնասում կամ ավելացվում է այլ ակտիվի սկզբնական արժեքին՝ կիրառելով գծային մեթոդը ոչ նյութական ակտիվի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում, որը կազմում է 1 տարի:

3.3 Ֆինանսական գործիքներ

Ճանաչում և ապաճանաչում

Ֆինանսական ակտիվները և ֆինանսական պարտավորությունները ճանաչվում են, երբ Հիմնադրամը դառնում է ֆինանսական գործիքի պայմանագրային կողմ:

Ֆինանսական ակտիվներն ապաճանաչվում են, երբ լրանում են ֆինանսական ակտիվից ակնկալվող դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները, կամ այն ժամանակ, երբ ֆինանսական ակտիվները բոլոր նշանակալից ռիսկերով ու հատուցումներով փոխանցվում են երրորդ կողմին:

Ֆինանսական պարտավորությունները ապաճանաչվում են, երբ դրանք մարվում են, վճարման ենթակա չեն, չեղյալ են ճանաչվել կամ լրացել է դրանց ուժի մեջ լինելու ժամկետը:

Ֆինանսական ակտիվների դասակարգումը

Բոլոր ֆինանսական ակտիվները սկզբնապես չափվում են իրական արժեքով՝ գումարած գործարքի հետ կապված ծախսումները, բացառությամբ այն առևտրային դեբիտորական պարտքերի, որոնք չեն պարունակում էական ֆինանսական բաղադրիչ և չափվում են գործարքի գնով՝ ՖՀՄՄ 15-ի պահանջներին համապատասխան:

Ֆինանսական ակտիվները, բացառությամբ հեջավորման գործիքների բաժանվում են հետևյալ կատեգորիաների.

- ամորտիզացված արժեքով հաշվառվող,
- իրական արժեքով չափվող՝ շահույթի կամ վնասի միջոցով,
- իրական արժեքով չափվող՝ այլ համապարփակ արդյունքի միջոցով:

Դասակարգումը բնորոշվում է հետևյալ երկու պարագայով.

- Հիմնադրամը՝ ֆինանսական ակտիվների կառավարման բիզնես մոդելը,
- ֆինանսական ակտիվի՝ պայմանագրային դրամական հոսքերի հատկանիշները:

Ֆինանսական ակտիվներին առնչվող ամբողջ եկամուտը և ծախսերը, որոնք ճանաչվում են տարվա արդյունքում, արտացոլված են ֆինանսական ծախսերում, ֆինանսական եկամուտում կամ այլ ֆինանսական արդյունքներում, բացառությամբ առևտրային դեբիտորական պարտքերի արժեզրկման, որը արտացոլված է վարչական ծախսերում:

Ֆինանսական ակտիվների հետագա չափումը

Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ

Ֆինանսական ակտիվները հաշվառվում են ամորտիզացված արժեքով, եթե ակտիվները բավարարում են հետևյալ պայմաններին (և չեն դասակարգված որպես իրական արժեքով չափվող՝ շահույթի կամ վնասի միջոցով).

- դրանք պահվում են այն բիզնես մոդելի շրջանակներում, որի նպատակն է պահել ֆինանսական ակտիվները և հավաքագրել դրանց հետ կապված պայմանագրային դրամական հոսքերը,

- Ֆինանսական ակտիվների պայմանագրային պայմաններն առաջացնում են դրամական հոսքեր, որոնք հանդիսանում են միայն մայր գումարի և չմարված մայր գումարի վրա հաշվարկված տոկոսների վճարումներ:

Սկզբնական ճանաչումից հետո այս ակտիվները չափվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Այն դեպքերում, երբ գեղջման ազդեցությունը աննշան է, գեղջում չի կատարվում: Ֆինանսական գործիքների այս կատեգորիայում են դասակարգվում Ընկերության մնացորդները բանկերում և դրամարկում, առևտրային դեբիտորական պարտքերը և տրված կարճաժամկետ փոխառությունները:

Ֆինանսական ակտիվներ՝ չափվող իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով

Ֆինանսական ակտիվները, որոնք պահվում են «հավաքագրման համար պահվող» կամ «հավաքագրման և վաճառքի համար պահվող» բիզնես մոդելներից տարբեր մոդելի շրջանակներում, դասակարգվում են որպես իրական արժեքով չափվող՝ շահույթի կամ վնասի միջոցով: հետագայում, անկախ բիզնես մոդելից, բոլոր այն ֆինանսական ակտիվները, որոնց պայմանագրային դրամական հոսքերը չեն հանդիսանում միայն մայր գումարի և հաշվարկված տոկոսի մարում, հաշվառվում են իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով: Բոլոր ածանցյալ ֆինանսական գործիքները դասակարգվում են այս կատեգորիայում, բացառությամբ հեջավորման գործիքների, որոնց համար գործում են հեջավորման հաշվառմանը ներկայացվող պահանջները:

Այս կատեգորիայում դասակարգված ակտիվները չափվում են իրական արժեքով՝ օգուտը կամ կորուստները ճանաչելով շահույթում կամ վնասում: Այս կատեգորիայում դասակարգված ֆինանսական ակտիվների իրական արժեքը որոշվում է գործող շուկայի գործարքներին հղում կատարելով կամ, այն պարագայում, երբ առկա չէ գործող շուկա՝ կիրառելով գնահատման մեթոդ:

Ֆինանսական ակտիվների արժեզրկում

Ակնկալվող պարտքային կորուստները ճանաչելու համար ՖՀՄՍ 9-ում արժեզրկմանը ներկայացված պահանջներում օգտագործվում է ապագային առնչվող տեղեկատվություն՝ «Ակնկալվող պարտքային կորուստների մոդելը»: ՖՀՄՍ 9-ի պահանջների շրջանակներում ընդգրկվող գործիքները ներառում են տրված վարկերը և փոխառային տիպի այլ ֆինանսական ակտիվները, որոնք չափվում են ամորտիզացված արժեքով և իրական արժեքով՝ այլ համապարփակ արդյունքում, առևտրային դեբիտորական պարտքերը, պայմանագրային ակտիվները որոնք ճանաչվել և չափվել են ՖՀՄՍ 15-ի համաձայն և վարկային պարտավորությունները և որոշ ֆինանսական երաշխավորության պայմանագրերը (թողարկողի համար), որոնք չեն չափվում իրական արժեքով՝ շահույթում կամ վնասում:

Պարտքային կորուստների ճանաչումը այլևս կախված չէ Ընկերության՝ պարտքային կորուստը բնորոշող իրադարձության սկզբնական բացահայտումից: Փոխարենը, պարտքային ռիսկը գնահատելիս և ակնկալվող պարտքային կորուստները չափելիս Ընկերությունը դիտարկում է տեղեկատվության ավելի ընդլայնված զանգված՝ ներառյալ անցյալ իրադարձությունները, ընթացիկ պայմանները, խելամիտ և հիմնավորված կանխատեսումները, որոնք ազդեցություն ունեն գործիքի ապագա դրամական հոսքերի ակնկալվող հավաքագրելիության վրա:

Առաջընթաց գնահատման մոտեցումը կիրառելիս առանձնացվում են հետևյալները.

ֆինանսական գործիքներ, որոնց պարտքային որակները սկզբնական ճանաչումից հետո էականորեն չեն վատթարացել կամ ունեն ցածր պարտքային ռիսկ («Փուլ 1») և

ֆինանսական գործիքներ, որոնց պարտքային որակները սկզբնական ճանաչումից հետո էականորեն վատթարացել են և որոնց պարտքային ռիսկը ցածր չէ («Փուլ 2»):

«Փուլ 3»-ը ընդգրկում է այն ֆինանսական ակտիվները, որոնց մասով հաշվետու ամսաթվի դրությամբ առկա են արժեզրկման օբյեկտիվ ապացույցներ:

Առաջին դասի ակտիվների համար ճանաչվում են «12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստները», մինչդեռ «գործողության ամբողջ ժամանակահատվածի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստները» ճանաչվում են երկրորդ դասի ակտիվների համար: Ակնկալվող պարտքային

կորուստների չափումը որոշվում է ֆինանսական գործիքի ակնկալվող գործողության ժամկետի պարտքային կորուստների հավանականության միջին կշռված գնահատումով:

Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր

Հիմնադրամը հաշվառում է առևտրային և այլ դեբիտորական պարտքերը և պայմանագրային ակտիվները օգտվելով պարզեցված մոտեցումից և կորստի գծով պահուստը ձևակերպում է որպես գործողության ամբողջ ժամանակահատվածի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստներ: Դրանք իրենցից ներկայացնում են պայմանագրային դրամական հոսքերի ակնկալվող դադարեցումները՝ հաշվի առնելով ֆինանսական ակտիվի գործողության ժամկետի ամբողջ ընթացքում ցանկացած պահի չմարվելու հնարավորությունը: Ակնկալվող պարտքային կորուստները հաշվարկելիս Հիմնադրամը օգտագործում է պահուստի մատրիցան՝ ելնելով պատմական փորձից, արտաքին ցուցանիշներից և ապագային առնչվող տեղեկատվությունից:

Հիմնադրամը դեբիտորական պարտքերի ակնկալվող պարտքային կորուստների գնահատման համար օգտագործում է ՖՀՄՍ 9-ի կողմից թույլատրվող պարզեցված մոտեցում, համաձայն որի Պահուստավորման սանդղակը հիմնվում է Հիմնադրամի պատմական կորստի դրույքաչափերի վրա՝ ճշգրտված ապագա սպասվող դեպքերով: Հիմնադրամը դեբիտորական պարտքերի արժեզրկումները ճանաչում է ներքոնշյալ դրույքներով, որոնք կարող են հետագայում փոխվել՝ դեբիտորական պարտքերի հետագա արժեզրկումների արդյունքում:

Դեբիտորական պարտքերի պայմանագրային ժամկետայնության օրեր	Արժեզրկման տոկոս
Մինչև 90 օր	10%
91-180 օր	20%
181-270 օր	50%
271 և ավել	100%

Ֆինանսական պարտավորությունների դասակարգումը և չափումը

Ընկերության ֆինանսական պարտավորությունները ներառում են վարկերը և փոխառությունները, առևտրային և այլ կրեդիտորական պարտքերը: Ընկերության ֆինանսական պարտավորությունները, ըստ կատեգորիաների, ներկայացված են ծանոթագրություն 15.2-ում:

Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր

Առևտրային և այլ կրեդիտորական պարտքերը ճանաչվում են իրական արժեքով, հետագայում չափվում են ամորտիզացված արժեքով:

3.4 Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Մնացորդները դրամարկղում և բանկերում ներառում են կանխիկ միջոցները, բանկային հաշիվների մնացորդները և դրամական միջոցները՝ ճանապարհին:

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվության նպատակով՝ դրամական միջոցների համարժեքները կարճաժամկետ, բարձր իրացվելի ներդրումներն են, որոնք հեշտ փոխարկվում են դրամական միջոցների՝ նախապես հայտնի գումարներով, և որոնց արժեքի փոփոխման ռիսկը նշանակալի չէ: Դրամական միջոցների համարժեքները պահվում են կարճաժամկետ դրամական պարտավորությունները բավարարելու նպատակով, այլ ոչ թե ներդրման կամ այլ նպատակներով: Հիմնադրամը դասակարգում է ներդրումները որպես դրամական միջոցների համարժեքներ այն դեպքում, եթե դրանք հեշտ փոխարկվում են դրամական միջոցների՝ նախապես հայտնի գումարներով, և որոնց արժեքի փոփոխման ռիսկը նշանակալի չէ:

3.5 Հատուցումներ աշխատակիցներին

Կարճաժամկետ հատուցումներն աշխատակիցներին այն հատուցումներն են, որոնք ենթակա են

մարման ամբողջությամբ տարեկան այն հաշվետու ժամանակաշրջանի ավարտից հետո տասներկու ամսվա ընթացքում, որում աշխատակիցները մատուցել են համապատասխան ծառայությունները: Դրանք ներառում են՝

- (ա) աշխատավարձերը և պարգևավճարները,
- (բ) վճարովի տարեկան արձակուրդները և անաշխատունակության հետ կապված վճարովի արձակուրդները,
- (գ) քաղաքացիաիրավական հիմունքներով վճարված եկամուտները

3.6 Ստացվող շնորհներից եկամուտ

Շնորհները ճանաչվում են սիստեմատիկ հիմունքով եկամուտ այն ժամանակաշրջանում, որի ընթացքում դրանք փոխհատուցում են համապատասխան ծախսումները, որոնց համար դրանք ստացվել են:

Ստացված պետական շնորհները չեն ճանաչվում այնքան ժամանակ, մինչև առկա չլինի ողջամիտ հավաստիացում, որ Հիմնադրամը կհամապատասխանի իրեն կցված պայմաններին, որի արդյունքում կստացվեն շնորհները:

Պետական շնորհները ճանաչվում են շահույթ կամ վնասում այն ժամանակաշրջանում, երբ Հիմնադրամը ճանաչում է շնորհին վերաբերվող ծախսը: Մասնավորապես պետական դրամաշնորհների հիմնական պայմաններն այն են, որ Հիմնադրամը պետք է կառուցի, գնի, կամ այլ կերպ, ձեռք բերի ոչ նյութական ակտիվ (Այդ թվում շենք, շինություններ, սարքավորումներ), որը ճանաչվում է որպես հետաձգված եկամուտ Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում և համակարգված և ռացիոնալ հիմունքով ճանաչվում շահույթ կամ վնասի մասին հաշվետվությունում՝ ակտիվի օգտակար ծառայության ժամկետի ընթացքում:

4 Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ

Հազար դրամ	Տնտեսական գույք	Ոչ նյութական ակտիվներ	Ընդամենը
<i>Սկզբնական արժեք</i>			
2022թ. հունվարի 1-ի դրությամբ	484	160	644
Ավելացում	48	181	229
Օտարում	-	(168)	(168)
2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	532	173	705
Ավելացում	39	156	195
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	571	329	900
<i>Կուտակված մաշվածություն</i>			
2022թ. հունվարի 1-ի դրությամբ	142	-	142
Տարվա հաշվարկ	256	142	398
Դուրսգրում	-	(48)	(48)
2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	398	94	492
Տարվա հաշվարկ	103	146	249
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	501	240	741
<i>Հաշվեկշռային արժեք</i>			
2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	134	79	213
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	70	89	159

5 Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր

Հազար դրամ	31 դեկտեմբերի 2023թ.	31 դեկտեմբերի 2022թ.
<i>Ֆինանսական ակտիվներ</i>		
Առևտրային դեբիտորական պարտքեր	1,694	1,493
Այլ դեբիտորական պարտքեր	90	125
Ակնկալվող պարտքային կորուստների համար պահուստ	(1,350)	(1,350)
	<u>434</u>	<u>268</u>
<i>Ոչ ֆինանսական ակտիվներ</i>		
Տրված կանխավճարներ	9,579	4,700
Դեբիտորական պարտքեր բյուջեյից	138	2,264
	<u>9,717</u>	<u>6,964</u>
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	<u><u>10,151</u></u>	<u><u>7,232</u></u>

2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ առևտրային դեբիտորական պարտքերի համար կորուստի գծով պահուստի մնացորդը համադրվում է տարեսկզբի մնացորդի հետ հետևյալ կերպ.

Հազար դրամ	2023թ.	2022թ.
Կորուստների գծով պահուստը հունվարի 1-ի դրությամբ	1,350	600
Տարվա ընթացքում պահուստի ճանաչում	-	750
Կորուստների գծով պահուստը դեկտեմբերի 31-ի դրությամբ	<u>1,350</u>	<u>1,350</u>

Տե՛ս ծանոթագրություն 16(ա) Առևտրային և այլ դեբիտորական պարտքերի մնացորդների արժույթների բացահայտման համար:

6 Մնացորդներ դրամարկղում և բանկերում

Հազար դրամ	31 դեկտեմբերի 2023թ.	31 դեկտեմբերի 2022թ.
Կանխիկ միջոցներ	27	562
Բանկային հաշիվներ	4,998	204
	<u>5,025</u>	<u>766</u>

Տե՛ս ծանոթագրություն 16(ա) դրամարկղում և բանկերում մնացորդների արժույթների բացահայտման համար:

7 Կանոնադրական կապիտալ

Հիմնադրամի միակ հիմնադիրն է հանդիսանում ՀՀ քաղաքացի Ֆլորա Ռոբերտի Հարությունյանը: Հիմնադրամի սկզբնական միջոցներն են հիմնադրի կողմից ստեղծման պահին փոխանցված նյութական և (կամ) ֆինանսական միջոցները, որը կազմում է 500 հազար ՀՀ դրամ:

8 Փոխառություններ

Հազար դրամ	31 դեկտեմբերի 2023թ.	31 դեկտեմբերի 2022թ.
Ստացված ընթացիկ փոխառություններ ղեկավարությունից	14,453	3,710
	<u>14,453</u>	<u>3,710</u>

Ստացված փոխառությունների իրական արժեքներն հավասար են դրանց հաշվեկշռային արժեքներին, քանի որ զեղչման ազդեցությունը էական չէ:

Տե՛ս ծանոթագրություն 16 (ա)՝ Տրված փոխառությունների արժույթների բացահայտման համար:

9 Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր

Հազար դրամ	31 դեկտեմբերի 2023թ.	31 դեկտեմբերի 2022թ.
Առևտրային կրեդիտորական պարտքեր	5,467	337
Կրեդիտորական պարտքեր աշխատակիցներին	-	705
Զօգտագործված արձակուրդի գծով պարտավորություն	7,746	4,816
	<u>13,213</u>	<u>5,858</u>
Ստացված կանխավճարներ	2,986	-
Կրեդիտորական պարտքեր բյուջեյին	3,074	1,148
	<u>6,060</u>	<u>1,148</u>
	<u>19,273</u>	<u>7,006</u>

Տե՛ս ծանոթագրություն 16(ա) Առևտրային և այլ կրեդիտորական պարտքերի մնացորդների արժույթների բացահայտման համար:

10 Հասույթ

Հազար դրամ	2023թ.	2022թ.
Գիտատեխնիկական նախագծերի և կանոնակարգերի մշակում	36,266	29,833
Ապրանքների վաճառք	10,387	46,161
Խորհրդատվական ծառայություն	7,542	-
Քաղաքաշինության բնագավառում մատուցված ծառայություններ	2,959	-
Մասրիկ 1 55 Մվտ ֆոտովոլտային արևային կայանի ռեժիմային հաշվարկի իրականացում	-	6,187
Այլ ծառայություն	1,630	1,706
	<u>58,784</u>	<u>83,887</u>

11 Ինքնարժեք

Հազար դրամ	2023թ.	2022թ.
Աշխատավարձի վճարներ	28,739	29,344
Վաճառված ապրանքների ինքնարժեք	8,175	30,876
Գիտատեխնիկական նախագծերի և կանոնակարգերի մշակման ինքնարժեք	132	2,078
Այլ մատուցված ծառայությունների ինքնարժեք	3,978	2,182
	<u>41,024</u>	<u>64,480</u>

12 Վարչական ծախսեր

Հազար դրամ	2023թ.	2022թ.
Հատուցում աշխատակիցներին	24,502	26,384
Վարձակալություն	2,940	2,251
Աուդիտորական և խորհրդատվական ծախսեր	2,910	3,773

Հազար դրամ	2023թ.	2022թ.
Տրանսպորտային ծախսեր	1,200	3,853
Տեխնիկայի վարձակալություն	833	-
Գործուղման և ներկայացուցչական ծախսեր	325	323
Մաշվածություն և Ամրոտիզացիա	249	398
Կոմունալ ծախսեր	226	28
Բանկային ծախսեր	94	247
Չփոխհատուցվող հարկեր և տուրքեր	-	767
Դեբիտորական պարտքերի արժեզրկումից վնաս	-	750
Ոչ նյութական ակտիվների վերագնահատումից կորուստներ	-	120
Այլ	982	1,106
	34,261	40,000

13 Շահութահարկի գծով հակադարձում

Հազար դրամ	2023թ.	2022թ.
Ընթացիկ տարվա հարկի գծով ծախս	(90)	(57)
Հետաձգված հարկային ակտիվների և պարտավորությունների փոփոխություններ՝ ժամանակավոր տարբերությունների առաջացման և հակադարձման գծով	527	1,002
Ընդամենը ծախս շահութահարկի գծով	437	945

Արդյունավետ հարկային դրույքի համադրում դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

Հազար դրամ	2023թ.	%	2022թ.	%
Արդյունք նախքան շահութահարկի գծով հարկումը	(15,714)		(20,973)	
Շահութահարկ՝ հարկի կիրառելի դրույքաչափով	(2,829)	18%	(3,775)	18%
Չնվազեցվող ծախսեր	3,266	-21%	4,720	-23%
	437	-3%	945	-5%

Դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա հետաձգված հարկերը խմբավորված են հետևյալ կերպ.

Հազար դրամ	1 հունվարի 2023թ.	Տարվա արդյունքում ճանաչված	31 դեկտեմբերի 2023թ.
<i>Հետաձգված հարկային ակտիվներ</i>			
Չօգտագործված արձակուրդի գծով պարտավորություն	867	527	1,394
Առևտրային դեբիտորական պարտքեր	243	-	243
Ընդամենը հետաձգված հարկային ակտիվներ	1,110	527	1,637
Չուտ արդյունք - հետաձգված հարկային ակտիվներ	1,110	527	1,637

Հազար դրամ	1 հունվարի 2022թ.	Տարվա արդյունքում ճանաչված	31 դեկտեմբերի 2022թ.
<i>Հետաձգված հարկային ակտիվներ</i>			
Չօգտագործված արձակուրդի գծով պարտավորություն	-	867	867
Առևտրային դեբիտորական պարտքեր	108	135	243
Ընդամենը հետաձգված հարկային ակտիվներ	108	1,002	1,110
Ձուտ արդյունք - հետաձգված հարկային ակտիվներ	108	1,002	1,110

14 Կարևոր հաշվապահական գնահատումներ և դատողություններ

Ենթադրությունները և դատողությունները շարունակաբար գնահատվում են և հիմնված են պատմական փորձի, ինչպես նաև այլ ցուցանիշների վրա, ներառյալ ապագա ակնկալվող իրադարձությունները, որոնք սովորաբար հանգամանքներում համարվում են ընդունելի:

15 Ֆինանսական գործիքներ

15.1 Հաշվապահական հաշվառման քաղաքականություններ

Ֆինանսական ակտիվի և ֆինանսական պարտավորության յուրաքանչյուր դասի համար կիրառված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը և ընդունված մեթոդների մանրամասները, ինչպես նաև եկամտի և ծախսերի ճանաչման չափանիշներն ու հիմքերը ներկայացված են ծանոթագրություն 3-ում:

15.2 Ֆինանսական գործիքների կատեգորիաները

Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքները ըստ կատեգորիաների ներկայացված են ստորև.

Հազար դրամ	31 դեկտեմբերի 2023թ.	31 դեկտեմբերի 2022թ.
Ֆինանսական ակտիվներ		
<i>Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ</i>		
Տրված փոխառություններ	115	-
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	434	268
Մնացորդներ դրամարկղում և բանկերում	5,025	766
Ընդամենը ֆինանսական ակտիվներ	5,574	1,034
Ֆինանսական պարտավորություններ		
<i>Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական պարտավորություններ</i>		
Փոխառություններ	14,453	3,710
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	13,213	5,858
Ընդամենը ֆինանսական պարտավորություններ	27,666	9,568

16 Ֆինանսական ռիսկի կառավարման ուղղություններ

Հիմնադրամը ենթարկվում է զանազան ռիսկերի, որոնք կապված են Ֆինանսական գործիքների հետ: Այս ռիսկերն են

- շուկայական ռիսկը,
- պարտքային ռիսկը,
- իրացվելիության ռիսկը:

Հիմնադրամը ներգրավված չէ սպեկուլյատիվ նպատակներով ֆինանսական ակտիվների ակտիվ առքուվաճառքի գործարքներում, ինչպես նաև չի թողարկում օպցիոններ: Առավել էական ֆինանսական ռիսկերը, որոնց Հիմնադրամը կարող է ենթարկվել, նկարագրված են ստորև:

Ֆինանսական ռիսկի գործոններ

1) Շուկայական ռիսկ

Շուկայական ռիսկը Հիմնադրամի եկամտի կամ նրա ֆինանսական գործիքների արժեքի փոփոխության ռիսկն է շուկայական գների, այդ թվում արտարժույթի փոխարժեքների, տոկոսադրույքների և բաժնետոմսերի գների փոփոխության արդյունքում: Շուկայական ռիսկի կառավարման նպատակը ռիսկի այնպիսի կառավարումն ու վերահսկումն է, որը թույլ կտա պահպանել այս ռիսկին ենթարկվածության աստիճանն ընդունելի սահմաններում՝ միաժամանակ ապահովելով ռիսկի դիմաց եկամտաբերության օպտիմալացումը:

ա) Արտարժույթային ռիսկ

Արտարժույթի ռիսկի նկատմամբ Հիմնադրամի ենթարկվածությունը կապված է ֆունկցիոնալ արժույթից տարբեր արժույթով՝ հիմնականում Եվրոյով արտահայտված գնումների հետ:

Ենթարկվածությունն արտարժույթի ռիսկին

Ստորև ներկայացված է արտարժույթի ռիսկին Հիմնադրամի ենթարկվածությունը:

	2023թ.				
Հոդված	ՀՀ դրամ	Եվրո	ԱՄՆ դոլլար	Ռուբլի	Ընդամենը
<i>Ֆինանսական ակտիվներ</i>					
Տրված փոխառություններ	115	-	-	-	115
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	434	-	-	-	434
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	5,006	18	1	-	5,025
Ընդամենը Ֆինանսական ակտիվներ	5,555	18	1	-	5,574
<i>Ֆինանսական պարտավորություններ</i>					
Փոխառություններ	14,453	-	-	-	14,453
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	9,829	-	-	3,384	13,213
Ընդամենը Ֆինանսական պարտավորություններ	24,282	-	-	3,384	27,666
Զուտ ենթարկվածություն	(18,727)	18	1	(3,384)	(22,092)

	2022թ.		
Հոդված	ՀՀ դրամ	ԱՄՆ դոլլար	Ընդամենը
<i>Ֆինանսական ակտիվներ</i>			
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	268	-	268
Մնացորդներ դրամարկղում և բանկերում	754	12	766
Ընդամենը Ֆինանսական ակտիվներ	1,022	12	1,034
<i>Ֆինանսական պարտավորություններ</i>			
Փոխառություններ	3,710	-	3,710
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	5,858	-	5,858
Ընդամենը Ֆինանսական պարտավորություններ	9,568	-	9,568
Զուտ ենթարկվածություն	(8,546)	12	(8,534)

Չգայունության վերլուծություն

Դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ դրամի փոխարժեքի ողջամիտ հնարավոր արժևորումը Եվրոյի նկատմամբ կազդեր արտարժույթով արտահայտված ֆինանսական գործիքների չափման վրա և նախքան հարկումը շահույթի կամ վնասի վրա ստորև ներկայացված գումարների չափով: Վերլուծությունն իրականացվել է ենթադրելով, որ մյուս բոլոր փոփոխականները, մասնավորապես տոկոսադրույքները, կմնան անփոփոխ և հաշվի չառնելով կանխատեսվող առք ու վաճառքի ազդեցությունը:

Հազար դրամ	Դուբլու ազդեցությունը	
	Փոփոխություն արտարժույթի փոխարժեքում, տոկոս	2023թ. 2022թ.
Արդյունքի վրա	10%	(338) -
	-10%	338 -

Արտարժույթի փոխարժեքի տատանման ազդեցությունը տարվա ընթացքում փոփոխվում է՝ կախված արտերկրյա գործարքների ծավալից: Այդուհանդերձ, վերը ներկայացված վերլուծությունը կարելի է համարել Հիմնադրամի՝ արտարժույթային ռիսկին ենթարկվածության արտացոլումը:

2) Պարտքային ռիսկ

Պարտքային ռիսկն առաջանում է այն դեպքում, երբ պայմանագրային գործընկերը չի կատարում իր պարտավորությունները, որի հետևանքով Հիմնադրամը կարող է ֆինանսական կորուստներ կրել: Հիմնադրամը պարտքային ռիսկն առաջանում է ֆինանսական ակտիվներից՝ ներառյալ բանկերում պահվող դրամական միջոցները և դրանց համարժեքները և առևտրային և այլ դեբիտորական պարտքերը:

Պարտքային ռիսկը կառավարվում է խմբային հիմունքով՝ ելնելով Հիմնադրամի պարտքային ռիսկի կառավարման քաղաքականությունից և ընթացակարգերից:

ա) Առևտրային դեբիտորական պարտքեր

Հիմնադրամը բոլոր առևտրային դեբիտորական պարտքերի համար կիրառում է ՖՀՄՍ 9-ի պարզեցված մոդելը. «գործողության ամբողջ ժամանակահատվածի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստների ճանաչում», քանի որ այս դեբիտորները չեն պարունակում էական ֆինանսական բաղադրիչ: Ակնկալվող պարտքային կորուստները չափելիս առևտրային դեբիտորական պարտքերը գնահատվել են հավաքական հիմունքով, քանի որ դրանք ունեն պարտքային ռիսկի ընդհանուր բնորոշումներ: Դրանք խմբավորվել են՝ ելնելով ժամկետանց օրերից: Առևտրային դեբիտորական պարտքերի գծով ակնկալվող պարտքային կորուստների մեծությունը 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմում է 1,350 հազար ՀՀ դրամ (2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 1,350 հազար ՀՀ դրամ):

3) Իրացվելիության ռիսկ

Իրացվելիության ռիսկը ենթադրում է, որ Հիմնադրամը կունենա դժվարություններ՝ իր ֆինանսական պարտավորությունների հետ կապված պարտականությունները կատարելիս: Հիմնադրամի կողմից իրացվելիության ռիսկի կառավարման մոտեցումն է մշտապես ապահովել հնարավորինս բավարար իրացվելիություն, մասնավորապես ապահովել դրամական միջոցներ և դրանց համարժեքներին ինչպես նաև բարձր իրացվելի ակտիվների այնպիսի չափ պահանջվող ժամկետներում պարտավորությունները մարելու համար: Հիմնադրամի ֆինանսական պարտավորությունները կարճաժամկետ՝ մինչև մեկ տարի են:

17 Իրական արժեքի չափում

Հիմնադրամը սկզբնական ճանաչումից հետո իրական արժեքով չափվող ակտիվները և պարտավորությունները դասակարգում է 1-ից մինչև 3-րդ մակարդակներում՝ հիմնվելով իրական արժեքի դիտարկելիության աստիճանի վրա: Այս երեք մակարդակները ներկայացված են ստորև.

- 1-ին մակարդակ՝ իրական արժեքները ստացվում են նմանատիպ ակտիվների կամ պարտավորությունների ակտիվ շուկաներում գնանշվող գներից (չճշգրտված),
- 2-րդ մակարդակ՝ իրական արժեքները ստացվում են 1-ին մակարդակում ներառված գնանշվող գներից տարբեր այլ ելակետային տվյալներից, որոնք ակտիվի կամ պարտավորության գծով դիտարկվում են կամ ուղղակիորեն (այսինքն՝ որպես գներ), կամ անուղղակիորեն (այսինքն՝ գների հիման վրա ստացվող),
- 3-րդ մակարդակ՝ իրական արժեքները ստացվում են գնահատման հնարքների միջոցով, որոնք ներառում են ակտիվի կամ պարտավորության գծով ելակետային տվյալներ, որոնք հիմնված չեն դիտարկվող շուկայական տվյալների վրա (ոչ դիտարկելի ելակետային տվյալներ):

17.1 Ֆինանսական գործիքների իրական արժեքի չափում

Հետևյալ աղյուսակում ցույց են տրված նշված մակարդակները՝ պարբերական սկզբունքով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների հիերարխիայում՝ 2023թ. դեկտեմբերի 31-ի և 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

Հազար դրամ	Իրական արժեքի չափման հիերարխիա			
	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Հաշվեկշռային արժեք	Մակարդակ 1	Մակարդակ 2	Մակարդակ 3
<i>Նկարագրություն</i>				
<i>Իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ</i>				
Տրված փոխառություններ	115	-	115	-
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	434	-	434	-
Մնացորդներ դրամարկղում և բանկերում	5,025	-	5,025	-
<i>Իրական արժեքով չափվող ֆինանսական պարտավորություններ</i>				
Փոխառություններ	14,453	-	14,453	-
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	13,213	-	13,213	-

Հազար դրամ	Իրական արժեքի չափման հիերարխիա			
	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Հաշվեկշռային արժեք	Մակարդակ 1	Մակարդակ 2	Մակարդակ 3
<i>Նկարագրություն</i>				
<i>Իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ</i>				
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	268	-	268	-
Մնացորդներ դրամարկղում և բանկերում	766	-	766	-
<i>Իրական արժեքով չափվող ֆինանսական պարտավորություններ</i>				

Նկարագրություն	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Հաշվեկշռային արժեք	Մակարդակ 1	Մակարդակ 2	Մակարդակ 3
Փոխառություններ	3,710	-	3,710	-
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	5,858	-	5,858	-

Քանկային հաշիվների հաշվեկշռային արժեքը համարվում է իրական արժեքի խելամիտ գնահատում:

18 Պարտավորվածություններ

18.1 Իրավական պարտավորվածություններ

2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների աուդիտի եզրակացության օրվա դրությամբ Հիմնադրամի նկատմամբ առկա չեն որևէ դատական հայցեր: Միևնույն ժամանակ Հիմնադրամը վերոնշյալ ամսաթվերի դրությամբ չունի որևէ դատական հայց ընդդեմ երրորդ կողմի:

19 Պայմանականություններ

19.1 Ապահովագրություն

Հայաստանի ապահովագրական համակարգը զարգացման փուլում է, և ապահովագրության շատ տեսակներ, որոնք լայնորեն տարածված են մյուս երկրներում, Հայաստանում դեռ չեն կիրառվում: Հիմնադրամը չունի ամբողջական ապահովագրական ծածկույթ իր ակտիվների և գործունեության ընդհատման համար, չունի նաև Հիմնադրամի գույքի կամ գործառնությունների հետ կապված պատահարների հետևանքով գույքին կամ շրջակա միջավայրին հասցված վնասի գծով երրորդ կողմի նկատմամբ պարտավորությունների ապահովագրություն: Քանի դեռ Հիմնադրամը համապատասխան ձևով ապահովագրված չէ, գոյություն ունի ռիսկ, որ որոշակի ակտիվների կորուստը կամ ոչնչացումը կարող է անբարենպաստ նյութական ազդեցություն ունենալ Հիմնադրամի գործունեության և ֆինանսական վիճակի վրա:

19.2 Հարկեր

Հայաստանի Հանրապետության հարկային օրենսդրությունը հաճախակի ենթարկվում է փոփոխությունների, ինչը որոշ դեպքերում մեկնաբանությունների կարիք է առաջացնում: Հաճախ տարբեր հարկային և իրավասու մարմիններ տարբեր մեկնաբանություններ ունեն: Հարկերը հարկային մարմինների կողմից ենթակա են վերանայման և ուսումնասիրության: Հարկային մարմիններն օրենքով լիազորված են տուգանքներ և տույժեր առաջադրել:

Վերոհիշյալ հանգամանքները Հայաստանում կարող են առաջացնել ավելի մեծ հարկային ռիսկեր, քան այլ երկրներում: Ղեկավարությունը համոզված է, որ հարկային պարտավորությունների գծով կատարել է համապատասխան հատկացումներ հարկային օրենսդրության համաձայն:

19.3 Շրջակա միջավայրի հետ կապված խնդիրներ

Ղեկավարությունը համոզված է, որ Հիմնադրամը բավարարում է շրջակա միջավայրի հետ կապված Կառավարության պահանջները և վստահ է, որ Հիմնադրամը շրջակա միջավայրի հետ կապված ընթացիկ էական պարտավորություններ չունի: Այնուամենայնիվ, Հայաստանում շրջակա միջավայրի վերաբերյալ օրենսդրությունը զարգացման փուլում է, և դրա հավանական փոփոխություններն ու

օրենսդրության մեկնաբանություններն ապագայում կարող են էական պարտավորություններ առաջացնել:

20 Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվության նպատակով՝ դրամական միջոցները և դրանց համարժեքները ներառում են դրամական միջոցները դրամարկղում ու բանկերում: Ֆինանսական տարվա վերջի դրությամբ դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունում ներկայացված դրամարկղում և բանկերում մնացորդները կարող են համադրվել ֆինանսական վիճակի մասին հաշվետվության հոդվածների հետ հետևյալ կերպ.

Հազար դրամ	31 դեկտեմբերի 2023թ.	31 դեկտեմբերի 2022թ.
Մնացորդներ դրամարկղում և բանկերում	5,025	766

21 Կապակցված կողմեր

Հիմնադրամի կապակցված կողմերը ներառում են հիմնական ղեկավար անձնակազմը, անդամները:

21.1 Վերահսկողություն

Հիմնադրամը վերահսկվում է հոգաբարձուների խորհրդի կողմից: Հիմնադրամի միակ հիմնադիրն է հանդիսանում ՀՀ քաղաքացի Ֆլորա Ռոբերտի Հարությունյանը:

21.2 Գործարքներ կապակցված կողմերի հետ

Հաշվետու տարվա ընթացքում Հիմնադրամի և իր կապակցված կողմերի միջև իրականացվել են հետևյալ գործարքները, և հաշվետու ամսաթվի դրությամբ մնացորդները հետևյալն են:

Հազար դրամ		
Գործարքներ	2023թ.	2022թ.
Գործարքներ ղեկավարության հետ		
Ստացված փոխառություններ	22,813	3,360
Փոխառությունների մարում	(12,070)	(2,750)

Հազար դրամ		
Մնացորդներ	31 դեկտեմբերի 2023թ.	31 դեկտեմբերի 2022թ.
Ղեկավարություն		
Փոխառություններ	12,853	3,710

21.3 Գործարքներ ղեկավարության հետ

Հազար դրամ	2023թ.	2022թ.
Աշխատավարձ և պարգևատրումներ (ներառյալ ՀՀ օրենսդրությամբ սահմանված հարկերը)	19,504	20,385